Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-726-23.02.2015-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2012 թվականի դեկտեմբերի 19-ի ՀՕ-236-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում և 3-րդ մասի 5-րդ կետում «58,35» թիվը փոխարինել «115.0» թվով,

2) 3-րդ մասի 4-րդ կետի «դ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«դ. սույն օրենքի 5-րդ հոդվածի առաջին պարբերության 6-րդ կետով նախատեսված ժամկետներում թույլ է տվել նույն կետով նախատեսված՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտման երրորդ դեպք՝ խախտումն արձանագրելու օրվանից մինչև խախտումը կատարելու օրացուցային տարվան հաջորդող մեկ տարին լրանալը.»:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածում՝

1) առաջին պարբերության 2-րդ կետում «58,35» թիվը փոխարինել «115,0» թվով, 4-րդ կետը «6-րդ կետում» բառերից հետո լրացնել «(բացառությամբ 4-րդ կետի «դ» ենթակետում)» բառերով և պարբերությունը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետով՝

«6) շրջանառության հարկ վճարող համարվելու ժամանակաշրջանում մեկ օրացուցային տարվա ընթացքում թույլ է տվել հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտման երրորդ դեպք:»,

2) ուժը կորցրած ճանաչել չորրորդ և հինգերորդ պարբերությունները:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի աղյուսակի «Առեւտրական (առք ու վաճառքի) գործունեությունից եկամուտներ» տողի «Դրույքաչափը» սյունակում «1%» թիվը փոխարինել «5%» թվով.

2) 1.1-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1.1. Հաշվետու ժամանակաշրջանի համար առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ստացվող եկամուտների մասով հաշվարկված շրջանառության հարկի գումարը նվազեցվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում անմիջական վաճառքի նպատակով ձեռք բերված ապրանքների գծով կատարված ծախսերի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված երկկողմանի հաստատված (վավերացված) հաշվարկային փաստաթղթերով հիմնավորված ծախսերի (ներառյալ անուղղակի հարկերը), ինչպես նաև Հայաստանի Հանրապետություն ներմուծված ապրանքների մասով ներմուծման հայտարարագրերում արտացոլված մաքսային արժեքի և հաշվարկված անուղղակի հարկերի հանրագումարի կամ ավելացված արժեքի հարկով հարկման բազայի ու հաշվարկված ավելացված արժեքի հարկի հանրագումարի (այսուհետ՝

ապրանքների ձեռքբերման ծախսեր) 4 տոկոսը կազմող գումարի չափով: Եթե սույն պարբերությամբ նախատեսված նվազեցումներից հետո շրջանառության հարկի գումարը կազմում է առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ստացվող եկամուտների նկատմամբ հաշվարկված 1.5%-ից, իսկ 2015 թվականի հուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար՝ 1%-ից պակաս գումար, ապա առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ստացվող եկամուտների համար շրջանառության հարկը հաշվարկվում է հարկվող օբյեկտի նկատմամբ 1.5%, իսկ 2015 թվականի հուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար՝ 1% դրույքաչափով: Սույն պարբերությանը համապատասխան շրջանառության հարկի գումարից չնվազեցված մասը՝ սույն պարբերության պահանջների պահպանմամբ, նվազեցվում է հետագա հաշվետու ժամանակաշրջանների համար առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ստացվող եկամուտների նկատմամբ հաշվարկվող շրջանառության հարկի գումարից:»,

3) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Հարկ վճարողները շրջանառության հարկի գումարների հաշվարկումը կատարում են ինքնուրույն, յուրաքանչյուր եռամսյակի արդյունքներով՝ սույն հոդվածի 1-ին և 1.1-րդ մասերով սահմանված դրույքաչափերով ու կարգով:»:

Հոդված 4. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասը:

Հոդված 5. Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Շրջանառության հարկով հարկման կարգից հարկման ընդհանուր կարգին անցնելիս համախառն եկամտից նվազեցվում են գույքային (այդ թվում՝ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների) մնացորդի մասով մինչև շրջանառության հարկ վճարող համարվելը և շրջանառության հարկ վճարող համարվելու ժամանակահատվածում կատարված ձեռքբերումները (բացառությամբ առևտրական (առք ու վաճառքի) գործունեության մասով ապրանքների ձեռքբերման ծախսերի)՝ օրենքով սահմանված ընդհանուր կարգով:»:

Հոդված 6. Օրենքի 14-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի առաջին նախադասությունը «ցույց տալու» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ստացվող եկամուտների մասով հաշվարկված շրջանառության հարկի գումարից սույն օրենքով սահմանված ապրանքների ձեռքբերման ծախսերի, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանում շրջանառության հարկի գումարից չնվազեցվող և փոխանցվող գումարների մասով նվազեցումներն ավել կատարելու» բառերով և մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով.

«Առևտրական (առք ու վաճառքի) գործունեության մասով տուգանքը չի կիրառվում, եթե կատարվող վերահաշվարկների արդյունքում սույն օրենքի 7-րդ հոդվածի 1.1-րդ մասի առաջին պարբերությանը համապատասխան վճարման ենթակա շրջանառության հարկի

գումարը չի գերազանցում շրջանառության հարկ վճարողի կողմից այդ գործունեության մասով հարկվող օբյեկտի նկատմամբ 1.5%, իսկ 2015 թվականի հուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար՝ 1% դրույքաչափով հաշվարկված հարկի գումարին:»,

2) ուժը կորցրած ճանաչել 3.1-րդ մասը և 4-րդ մասի երկրորդ պարբերությունը:

Հոդված 7. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 14.1-րդ հոդվածը:

Հոդված 8. Օրենքի 16-րդ հոդվածում

1) 1-ին մասից հանել «, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքի» բառերը:

2) ուժը կորցրած ճանաչել 2-րդ մասը

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հուլիսի 1-ից և գործում է մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

Օրենքի 5-րդ հոդվածի առաջին պարբերության 6-րդ կետի կիրառման իմաստով 2015 թվականի համար հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտումների դեպքերի քանակը հաշվարկվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերիփաթեթի վերաբերյալ առաջարկությունների

Առարկության, առաջարկության հեղինակը	**Առարկության, առաջարկության Բովանդակությունը**	**Եզրակացություն Կատարված փոփոխություններ**
ՀՀ կառավարություն	1. Խնդրի ամբողջական կարգավորման նպատակով անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ/ լրացումներ կատարել նաև «Ավելացված արժեքի մասին», «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» և «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում:	Ընդունվել է: Փաթեթին ավելացվել են համապատասխան օրենքների նախագծերը:

	2. «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը լրացնել նոր հոդվածով՝ «Հոդված 1. «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-107 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 25-րդ հոդվածի երկրորդ պարբերությունը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Հարկային մարմնի կողմից իրականացվող կամերալ (գրասենյակային) ուսումնասիրության արդյունքում «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1.1-րդ մասի պահանջների խախտում արձանագրվելու դեպքում արձանագրությամբ խախտում կատարած հաշվետու ժամանակաշրջանների համար շրջանառության հարկի ճշտված հաշվարկներ չեն կարող ներկայացվել:»:	Ընդունվել է: Օրենքի նախագիծը լրացվել է համապատասխան հոդվածով:
	3.«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի գործողության ժամկետը սահմանել 2015 թվականի հուլիսի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:
	4. «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը լրացնել նոր հոդվածով՝ «	Ընդունվել է:
	Հոդված 1. «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության 2000	

	թվականի մայիսի 17-ի ՀՕ-60 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 3-րդ կետում՝ **1)** «յոթերորդ պարբերությամբ» բառերը փոխարինել «ութերորդ պարբերությամբ» բառերով, **2)** հինգերորդ պարբերության առաջին նախադասությունը «կամերալ ուսումնասիրության» բառերից հետո լրացնել «(բացառությամբ սույն կետի վեցերորդ պարբերությամբ նախատեսված դեպքի)» բառերով, **3)** հինգերորդ պարբերությունից հետո կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր վեցերորդ պարբերությունով. «Եթե հարկային մարմնի կողմից իրականացվող կամերալ (գրասենյակային) ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ շրջանառության հարկ վճարողը որևէ հաշվետու ժամանակաշրջանում խախտել է «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1.1-րդ մասի պահանջները, հարկային մարմինը կազմում է խախտման վերաբերյալ վերադաս հարկային մարմնի սահմանած ձևով արձանագրություն, որում նշվում են՝ **1)** արձանագրության համարը, կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը. **2)** ուսումնասիրություն իրականացրած պաշտոնատար անձանց պաշտոնը, անունը, ազգանունը. **3)** տնտեսավարող սուբյեկտի լրիվ անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը. **4)** հաշվետու ժամանակաշրջանը (ժամանակաշրջանները), որոնց ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել է խախտում. **5)** «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1.1-րդ մասի պահանջների խախտման նկարագիրը: Սույն պարբերությանը համապատասխան իրականացվող կամերալ (գրասենյակային) ուսումնասիրության արձանագրության հիման վրա հարկային մարմինը կամերալ (գրասենյակային) ուսումնասիրության արդյունքներն մեկ աշխատանքային օրվա ընթացքում ամփոփում է ստուգման ակտի նախագծով, որը արձանագրության հետ միասին ակտի նախագծի կազմմանը հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ առարկություններ ներկայացնելու նպատակով: Սույն	Օրենքի նախագիծը լրացվել է համապատասխան հոդվածով:

	օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով ու ժամկետներում կամերալ (գրասենյակային) ուսումնասիրության արդյունքներն ամփոփվում են ստուգման ակտով:», **4)** տասներկուերորդ պարբերության 1-ին կետը «կամերալ (գրասենյակային)» բառերից առաջ լրացնել «սույն կետի հինգերորդ պարբերությանը համապատասխան» բառերով, իսկ «հաշվետվություններ ներկայացվելու» բառերից հետո՝ «ինչպես	
	նաև սույն կետի վեցերորդ պարբերությանը համապատասխան կամերալ (գրասենյակային) ուսումնասիրության արդյունքում խախտումներ հայտնաբերելու ու ստուգման ակտով հարկային պարտավորությունների վերահաշվարկման» բառերով: 5. «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի գործողության ժամկետը սահմանել 2015 թվականի հուլիսի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:
ՀՀ ԱԺ պատգամավոր Վարդան Այվազյան	1. Հարկերի մասին և Ստուգումների մասին օրենքների նախագծերում լրացուցիչ դրույթներ մտցնելու և որոշակի ճշգրտումների անհրաժեշտություն կա, կապված գույքագրման և փաստաթղթավորման պարտադիր պահանջի դուրս գալու հետ:	Հարկերի մասին և Ստուգումների մասին օրենքների նախագծերը խմբագրվել են:
	2. Ոսկերչական իրերի (զարդերի) առևտրական (առքուվաճառքի) գործունեություն իրականացնողների կողմից շրջանառության հարկով նույն մոտեցմամբ հարկումը (5%-4%≥1%) կարող է դժգոհության պատճառ դառնալ այս գործունեությամբ զբաղվող տասնյակ փոքր սուբյեկտների	Չի ընդունվել:

	համար: Ոսկերչական իրերի (զարդերի) առևտրի ոլորտի հարկման խնդիրները լրացուցիչ օրենսդրական լուծումների կարիք ունեն (օրինակ, արտոնագրային վճարների սկզբունքով), որը նպատակահարմար է մշակել և ընդունել սույն փաթեթի հետ:	
	3. Առաջարկվում է փաթեթում ներառել «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որով բացառություն կսահմանվի առևտրական (առքուվաճառքի) գործունեություն իրականացնողների շրջանառության հարկ վճարողների համար, նպատակ ունենալով վերջիններիս կողմից վերավաճառքի նպատակով ձեռքբերվող ապրանքների, իսկ ոսկերչական իրերի (զարդերի) դեպքում, նաև դրանց հումքի մասով հանել հարկային գործակալի պարտավորությունը:	Չի ընդունվել:
	4. ՓՄՁ սուբյեկտների համար արդեն իսկ մտահոգության առարկա են ՀՊՄ-ների կիրառման նոր տեխնիկական պահանջները, որոնց բավարարումը ենթադրում է այս սուբյեկտների համար զգալի լրացուցիչ ներդրումներ: Առաջարկում ենք ներկա փուլում ներառել (կամ զուգահեռ նախապատրաստել) «ՀՊՄ-ների կիրառման մասին» ՀՀ օրենքում և/կամ ՀՀ կառավարության համապատասխան որոշումներում փոփոխություններ նախատեսող նախագիծ, որով կլուծվի փոքր բիզնեսի համապատասխան խնդիրը:	Փաթեթի շրջանակներում ընդունված չէ:
	5. Պետք է հստակ նախատեսել, որպեսզի շրջանառության հարկ վճարողների համար որպես ծախսերը հիմնավորող և նվազեցումների հիմք հանդիսացող փաստաթղթեր ընդունվեն ինչպես ՀՊՄ կտրոնները, այնպես էլ գյուղատնտեսական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց կողմից տրամադրած փաստաթղթերը (գնման ակտ, տեղեկանք, պայմանագիր և այլն):	Փաթեթի շրջանակներում ընդունված չէ:
«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ		

ՀՀ ԱԺ պատգամավոր Թևան Պողոսյան	1. Օրենքի նախագծի հոդված 1-ում առաջարկվող 113.4 թիվը փոխարինել 150 թվով: 1. Օրենքի նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 15.1 հոդվածով. Հոդված 15.1 Անցումային դրույթներ 1. Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ մասի 5-րդ կետի և 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի 150 թիվը առնվազն 3 տարի չի կարող նվազել: 2. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի աղյուսակի «Առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից եկամուտներ» տողի «Դրյուքաչափը» սյունակի 5% թիվը առնվազն 3 տարի չի կարող ավելանալ:»:	Ընդունվել է մասնակի Սահմանված 113.4 մլն շեմը փոխարինվել է 115 մլն-ով: Ընդունվել է մասնակի:
ՀՀ ԱԺ պատգամավոր Խոսրով Հարությունյան	1. Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ կետում (օրենքի 7-րդ հոդվածի 1.1 կետի շարադրանքում) «կարող է նվազեցվել բառերը փոխարինել» «նվազեցվում է» բառով: Հանել «անմիջականորեն» բառը և երկրորդ նախադասությունը ամբողջությամբ:	Ընդունվել է մասնակի: Հոդվածի համապատասխան մասը խմբագրվել է:
	2. Կարևոր է նաև օրենքում ամրագրել դրույթ, որը արժանահավատ կդարձնի առևտրային գործունեություն իրականացնող անձի կողմից փաստացի փաստաթղթավորված շրջանառության մեծությունը՝ չառաջացնելով հավելյալ ստուգումներ իրականացնելու անհրաժեշտություն: «Օրենքի 9-րդ հոդվածը «հաշվարկը» բառից հետո շարունակել հետևյալ շարադրանքով՝ «իսկ առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող անձինք նաև վաճառքի/ վերավաճառքի նպատակով ապրանքների ձեռքբերման փաստաթղթերի պատճենները»:	Չի ընդունվել: Չի ընդունվել:
ՀՀ ԱԺ պատգամավոր Վարդան Այվազյան	1. Առաջարկում ենք շեմի թիվը 113.4 մլն-ի փոխարեն դարձնել 115 մլն:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:
	2.Օրենքի 7-րդ հոդվածի 1.1 մասի վերաբերյալ: Առաջին ընթերցման ներկայացված տարբերակում Օրենքի 7-րդ հոդվածի 1.1 կետը շարադրված	

	էր այնպես, որ շրջանառության հարկ վճարողները յուրաքանչյուր եռամսյակ իրենց կողմից վերավաճառքի նպատակով ձեռք բերված ապրանքների փաստաթղթավորված գործարքների 4%-ը պետք է նվազեցնեին համապատասխան ապրանքների իրացման եռամսյակի հարկի գումարից: Քանի որ հաճախ ապրանքը կարող է իրացվել ոչ այն եռամսյակում, որի ընթացքում ձեռք է բերվել, ուստի այս առաջարկում ենք որ, ամեն եռամսյակ հաշվարկված հարկի գումարը նվազեցվի տվյալ եռամսյակի ձեռքբերումների համապատասխան տոկոսի չափով:	Ընդունվել է մասնակի: Օրենքի 7-րդ հոդվածի 1.1կետը վերաշարադրող հոդվածի համապատասխան մասը խմբագրվել է:
	3. Շրջանառության հարկի ըստ էության նվազագույն 1.5% դրույքաչափը առաջարկվում է փոխարինել 1%-ով: Միաժամանակ առևտրի ոլորտի համար շրջանառության հարկի դրույքաչափի 5% (առավելագույն դրույքաչափ) սահմանումը և փաստաթղթավորված գործարքների հիման վրա նվազեցումներ իրականացնելու հնարավորություն ընձեռող համակարգի ներդրումը նպատակահարմար է իրականացնել փուլային տարբերակով՝ նախատեսելով անցումային ժամանակաշրջան ընդունվելիք օրենքի գործողության առաջին 6 ամիսներիհամար (01.07.15-31.12.15) նախատեսել 3.5%-3%≥ 1% առավելագույն-նվազեցվող և նվազագույն դրույքաչափեր, իսկ սկսած 01.01.16-ից՝ 5%-4%≥1% սխեման:	Առաջարկությունն իրացված է Նախագծի 3-րդ հոդվածում:
	4.Անհրաժեշտ է առևտրով զբաղվող սուբյեկտներին փաստաթղթավորված բոլոր՝ ոչ միայն ապրանքների ձեռքբերման մասով, ծախսերը նվազեցնելու հնարավորություն ընձեռելը (առնվազն վարձավճարի և կոմունալ վճարումների մասով):	Չի ընդունվել:
	5.Պետք է օրենքով ամրագրել շեմի ինդեքսավորման հնարավորություն, օրինակ՝ 3 տարին մեկ անգամ՝ ելնելով հայկական դրամի կամ սպառողական ապրանքների գների արժեզրկման մակարդակից: Նաև պետք է ամրագրել, որ ՓՄՁ ոլորտի համար ընդունվող կարգավորումները, այդ թվում հարկի դրույքաչափերը անփոփոխ կմնան առաջիկա 3-5 տարիներին:	Ընդունվել է մասնակի:
	6. Կարծում ենք, որ առևտրի ոլորտի համար առավելագույն 5% դրույքաչափի սահմանումը ներկա պայմաններում փոքր-ինչ բարձր է, և առաջարկվում է քննարկել վերջինիս 4%-ով փոխարինելու հնարավորությունը:	Չի ընդունվել:

ՀՀ կառավարություն	1.Հոդված 1-ը վերաշարադրել հետևյալ տեսքով. « **Հոդված 1.** «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2012 թվականի դեկտեմբերի 19-ի ՀՕ-236-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածում՝ **1)** 2-րդ մասում և 3-րդ մասի 5-րդ կետում «58,35» թիվը փոխարինել «115.0» թվով, **2)** 3-րդ մասի 4-րդ կետի «դ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «դ. սույն օրենքի 5-րդ հոդվածի առաջին պարբերության 6-րդ կետով նախատեսված ժամկետներում թույլ է տվել նույն կետով նախատեսված՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտման երրորդ դեպք՝ խախտումն արձանագրելու օրվանից մինչև խախտումը կատարելու օրացուցային տարվան հաջորդող մեկ տարին լրանալը.»:»	Ընդունվել է: Հոդվածը խմբագրվել է:
	2. Հոդված 4-ը վերաշարադրել հետևյալ տեսքով. «Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասը:»	Ընդունվել է: Հոդվածը խմբագրվել է:
	3.Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով . «Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Շրջանառության հարկով հարկման կարգից հարկման ընդհանուր կարգին անցնելիս համախառն եկամտից նվազեցվում են գույքային (այդ թվում՝ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների) մնացորդի մասով մինչև շրջանառության հարկ վճարող համարվելը և շրջանառության հարկ վճարող համարվելու ժամանակահատվածում կատարված ծեռքբերումները (բացառությամբ առևտրական (առք ու վաճառքի) գործունեության մասով ապրանքների ձեռքբերման ծախսերի)՝ օրենքով սահմանված ընդհանուր կարգով:»:»	Ընդունվել է: Նախագիծը լրացվել է նոր 5-րդ հոդվածով:
	4.Նախագծի 5-րդ հոդվածը ներկայացնել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ. «Օրենքի 14-րդ հոդվածում՝ **1)** 2-րդ մասի առաջին նախադասությունը «ցույց տալու» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից	Ընդունվել է: Հոդվածը խմբագրվել է: (Ներկայացված է որպես հոդված 6):

	ստացվող եկամուտների մասով հաշվարկված շրջանառության հարկի գումարից սույն օրենքով սահմանված ապրանքների ձեռքբերման ծախսերի, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանում շրջանառության հարկի գումարից չնվազեցվող և փոխանցվող գումարների մասով նվազեցումներն ավել	
	կատարելու» բառերով և մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Առևտրական (առք ու վաճառքի) գործունեության մասով տուգանքը չի կիրառվում, եթե կատարվող վերահաշվարկների արդյունքում սույն օրենքի 7-րդ հոդվածի 1.1-րդ մասի առաջին պարբերությանը համապատասխան վճարման ենթակա շրջանառության հարկի գումարը չի գերազանցում շրջանառության հարկ վճարողի կողմից այդ գործունեության մասով հարկվող օբյեկտի նկատմամբ 1.5%, իսկ 2015 թվականի հուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար՝ 1% դրույքաչափով հաշվարկված հարկի գումարին:», **2)** ուժը կորցրած ճանաչել 3.1-րդ մասը և 4-րդ մասի երկրորդ պարբերությունը:» 5.Հոդված 9-ը ներկայացնել հետևյալ խմբագրությամբ. « **Հոդված 9.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հուլիսի 1-ից և գործում է մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ: Օրենքի 5-րդ հոդվածի առաջին պարբերության 6-րդ կետի կիրառման իմաստով 2015 թվականի համար հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտումների դեպքերի քանակը հաշվարկվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից:»	Ընդունվել է: Հոդվածը խմբագրվել է: